

## Խաղողօրհներ

Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխումը՝ Տիրամորը նվիրված հայոց եկեղեցական տաղավարային գլխավոր տոներից է, որը կենցաղում առավել հայտնի է «Խաղողօրհներ» անվամբ: Ըստ կրոնական ավանդության Աստվածամայրը **խաղաղ մահ է ունեցել, ննջել և երկինք է փոխադրվել** կամ **վերափոխվել**:

Տոնը նշվում է օգոստոսի 15-ի մերձավոր կիրակի օրը: Հայոց կենցաղում տարածված այդ տոնի ընդհանուր համատեքստում առանձնանում էին ուխտագնացությունները, մատաղները և հատկապես խաղողօրհների արարողությունները:

Խաղողօրհները հեթանոսական-բնապաշտական ծագում ունեցող ծես է, որն առնչվում է ավանդական Նավասարդի և հատկապես՝ բերք ու պտղի առատությունն ապահովող հավատալիքների հետ: Այդ ծեսնանցյալում կատարվում էր մեծ հանդիսությամբ, քանի որ խաղողը հայոց մեջ ընկալվում էր իբրև ազնվագույնը մրգերի ընդհանուր համալիրում:

Աստծո որդին ևս հաճախ նմանեցվել է խաղողի որթի, իսկ սուրբ պատարագի արարողակարգի գինին պատրաստում էին խաղողից: Հայտնի է նաև, որ Հիսուսը վերջին ընթրիքի ժամանակ գինի մատուցելով իր աշակերտներին, ասել է՝ **«այս է իմ արյունը»**:

Ժամանակի ընթացքում հեթանոսական այդ տոնը քրիստոնեական երանգներ է ստացել և ամրապնդվել հայոց եկեղեցական տոնացույցում:

Մարիամ Աստվածածնին նվիրված այս տոնը, որն առավել հայտնի էր **Խաղողօրհներ** և **Աստվածածին** անուններով, Հայաստանի առանձին բնակավայրերում ուներ նաև անվանման այլ տարբերակներ, ինչպես նաև ժամկետային մասնակի տարբերություններ: Տաղավարային այս տոնը կենցաղում հայտնի էր նաև հետևյալ անվանումներով. **Աստվածածնի Զատիկ**, **Խաղողի Զատիկ** (**Խաղողը Զաղաղ**) (Մուսալեռ), **Աստվարածին** (Հարք-Բուլանըխ), **Աստաձաձին** (Վանք-Մեղրի) և այլն: Շատ բնակավայրերում Ս. Աստվածածնի Վերափոխումը հայտնի էր նաև **Պտուղի օրհնանքի տոն** հոմանիշ անվանմամբ: Ուշագրավ է, որ պահպանված ժողովրդական ավանդազրույցներում արտացոլված են և տոնին առնչվող նախապատմական, հեթանոսական և քրիստոնեական շերտերը, որը միաժամանակ մշակութային ժառանգորդության յուրօրինակ դրսևորում է: Ըստ ավանդության, «երբ Նոյն աղավնուն ուղարկում է

տեղեկություն բերելու, աղավնին հանդիպում է Քրիստոսին: Քրիստոսը մի ճուր խաղող է տալիս աղավնուն, օրհնում այն, հետո մի բաժակ գինի է վերցնում, խփում խաղողի ողկույզին ու ասում. Տար, տուր Նոյին, որ գինին իմ արյունն է, խաղողը իմ մարմինը, թող հավատա ու վախի ոչ մի նշույլ չունենա, թող հավատա ու տապանից դուրս գա, իջնի երկիր»:

Թերևս նմանատիպ ժառանգորդություն է նկատվում նաև այդ տոնի ուրարտական և հայկական գուգահեռներում: Խոսքը վերաբերում է Ահերի դռան արձանագրության մեջ հիշատակվող երրորդ խաղողի հասունացման ու բերքահավաքի տոնին, որը ժամկետային ու բովանդակային առումով որոշակի ընդհանրություններ ուներ Արշակունյաց շրջանի ամառային Նավասարդ ու Աստվածածնի Վերափոխում կամ Խաղողօրհներք տոների հետ (69):

Հայոց կենցաղում տարածված այդ տոնի ընդհանուր համատեքստում առանձնանում էին ուխտագնացությունները, մատաղները և հատկապես՝ խաղողօրհներքի արարողությունները:

Մինչև Ս. Աստվածածնին նվիրված այս տոնը, խաղողը պաս էր համարվում (Վարդավառից առաջ նույն կարգավիճակում էր խնձորը):

Տոնը հատկապես տարածված էր այգեշատ շրջաններում, ուր խաղողը եկեղեցիներում օրհնելու արարողությունը որոշակի մրցակցային երանգներ էր ձեռք բերել: Այգետերերը՝ ամենաընտիր խաղողը թաշկինակների մեջ կապած, օրհնելու էին տանում նշանավոր վանքերը կամ եկեղեցիները: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր առաջինը տեղ հասնել, որպեսզի առաջին օրհնությունն իրենց խաղողի և այգիների վրա լինի: Խաղողօրհներքի արարողությունից հետո սրբազան այդ վայրերում այգետերերը կազմակերպում էին խնջույքներ, որից հետո դեղ-գուռնայի ուղեկցությամբ՝ օրհնված խաղողի ողկույզներով վերադառնում էին տները և շարունակում քեֆ-ուրախությունները:

Անցյալում խաղողօրհներքի ծեսը հիմնականում տեղի էր ունենում այգիներում, երբ քահանան մի ձեռքին մկրատը, իսկ մյուսին՝ խաչը բռնած, այցելում էր եկեղեցու կամ տվյալ բնակավայրի երեցփոխի այգիները և հենց այնտեղ էլ կատարում խաղողի օրհնության արարողությունը:

Խաղողից բաժին էին հանում նաև թոչուններին, որոնց համար օրհնված ողկույզները կախում էին աղբյուրների կամ խաչքարերի վրա: Խաղողօրհներքի պատարագի ավարտից հետո, սովորաբար ամանները շարում էին եկեղեցու բակում և բոլորը միասին ճաշակում օրհնված խաղողը:

69 Այստեղ հիշատակվում են տարվա ընթացքում կատարվելիք երեք տոնակատարություններ՝ կապված այգեգործական աշխատանքների համապատասխան փուլերի հետ: Առաջին տոնը կարգադրվում է անցկացնել խաղողուտի էտումից հետո: Խաղողի որթի էտումը Հայաստանում սկսվում է մարտ ամսի վերջին տասնօրյակում և ավարտվում՝ ապրիլ ամսվա առաջին կեսում: Միերի դռան արձանագրությունում հիշատակված հաջորդ տոնը համապատասխանել է խաղողի մշակման երկրորդ փուլի՝ խաղողուտի խշմարման աշխատանքի կատարման ժամանակի հետ, որի քրիստոնեական գուգահեռը Համբարձման տոնն էր:

Հայաստանի շատ բնակավայրերում տոնը վերածվել էր երիտասարդության ծանոթության, շփման, աղջիկների և նորահարսների գեղեցկության ցուցադրման մի յուրատեսակ արարողության:

Տոնի կապակցությամբ կազմակերպվում էին ուխտագնացություններ:

Յուրաքանչյուր բնակավայր ուներ Տիրամորը նվիրված ուխտագնացության իր սրբատեղին: Հին երևանցիների և մերձակայքի բնակչության համար այն հիմնականում Նորքի Ս. Աստվածածին եկեղեցին էր՝ իր մրգառատ այգիներով: Ջավախքցիների համար՝ Վարձիայի Վերափոխման տաճարն էր, Շիրակի բնակչության համար՝

Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին, Օծունի և մերձակա բնակավայրերի համար՝ Օծունի Ս. Աստվածածին (նաև՝

Խաչգունդ կամ Խաչգոնդ) եկեղեցին, Ջնաբերդի համար (ուր այդ տոնը հայտնի էր «Մաղաղ» անունով)՝ գյուղի բարձր լեռնային **Խաչի յուրդ**

ամառանոցի տարածքում գտնվող Ս. Աստվածածնի մատուռը, մեղրեցիների համար՝ Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցին և այլն:

Ուխտագնացություններն ուղեկցվում էին մատաղի արարողություններով:

Սովորաբար զոհաբերում էին ուլ, ոչխար և աքլոր: Այդ տոնին

համեմատաբար շատ մատաղներ էին խոստանում, քանի որ Աստվածամայրը ժողովրդի կողմից ոչ միայն սիրելի էր, այլև՝ զորավոր, իրենց իղձերն ու ցանկություններն ամբողջությամբ իրականացնող:

Կանայք հատկապես շատ էին սիրում այդ տոնը թե՛ հիվանդության, թե՛ վշտի, և թե՛ ծննդաբերության ժամանակ և միշտ դիմում էին Սրբի օգնությանը:

Պատահական չէ, որ Հայաստանում կային Սուրբ Կույսի անունը

կրող բազմաթիվ սրբավայրեր, որոնց վերագրվում էր զավակ պարգևելու զորություն: Դրանցից նշանվոր էր Մոկսի Դաշտ թաղում գտնվող **«Աստվածամոր քար»-ը**, որի հետ կապված գոյություն ունեւ նաև ժողովրդական ավանդագրույց. «Աստվածածինը հղի ժամանակ մեջքը տվել է այս քարին և հանգստացել: Դրա համար էլ հղի կանայք գալիս են այստեղ, մեջքները տալիս քարին, որպեսզի հեշտությամբ ազատվեն (երեխա ունենան)»:

Ս. Աստվածածնի օգնությանը դիմում էին նաև երաշտի ժամանակ: Գյումրիում, օրինակ, երբ երաշտ է լինում, Տերտերը Սուրբ Կույսի պատկերը (նկարը) բռնած, տիրացուների հետ առջևից, իսկ ժողովուրդը հետևից, աղոթում էին, իսկ կանայք երկնքին նայելով արտասվում, որ երկինքը խղճա և անձրև գա: Այդպես շրջում էին քաղաքի փողոցներով և դուրս գալիս դաշտ: Ուշագրավ է, որ չի եղել դեպք, որ այդ արարողությունների արդյունքում անձրև չգար: Ի դեպ, Սուրբ Աստվածածնի նկարը, շրջակա գյուղերից և մոտիկ վայրերից բացի, մեծ հանդիսությամբ տանում էին նույնիսկ Դարս և Ախալքալակ՝ դարձյալ նույն նպատակով: Մուսալեոցիների կենցաղում բավական տարածված էր Ս. Աստվածածնի տոնին հարիսայի մատաղ-օրհնության արարողությունը, որի կազմակերպիչները թաղական խորհուրդներն էին:

Մեղրեցիները Մեծ թաղի Ս.Աստվածածին եկեղեցում օրհնել էին տալիս խաղողը և այնուհետև տոնախմբություն կազմակերպում **բազարի** չինարիների պուրակում: Խնջույքներն ուղեկցվում էին երգերով ու պարերով, սազանդարների ելույթներով, որից հետո գնում էին ամառանոցային Լիշկվազ և այնտեղ շարունակում ուրախ հանդիսությունները:

Ով ամենից շուտ էր հասնում Լիշկվազ, նրան «աղվես» էին անվանում, իսկ ամենաուշ ժամանողին՝ **«նալ հավաքող»** կամ **«հեզին»**:

Տոնի հաջորդ երկուշաբթին մեռելոց էր: Գնում էին գերեզմանոց, հարազատների գերեզմաններին խունկ ծխում, մոմ վառում և քահանային օրհնել տալիս մերձավոր հանգացյալների շիրիմները: Յուրաքանչյուր տնից ծիսական կերակուրներ և մասնավորապես խաղող էին տանում գերեզմանատուն կամ եկեղեցի, ուր միասին ճաշակում էին միաժամանակ՝ բաժին հանելով նաև աղբատների: Վերջում կատարվում էր հոգեհանգիստ՝ «համայն ննջելոց համար»:

**Աղբյուրը՝ Սամվել Մկրտչյան, «Ծեսեր, տոներ»**